ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ----------2022թ. **N--- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԼՈՒԿԱՇԻՆ 43/2 ՇԵՆՔԻ ԹԻՎ 77 ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2022 թվականի ծրագրի վերաբերյալ» N 498-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Լուկաշին 43/2 շենքի թիվ 77 ոչ բնակելի տարածքը (սեփականության վկայական թիվ 2461524) անհատույց օտարել (նվիրել) Հերմինե Յուրայի Բարսեղյանին:

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ **ԱՐՄԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

« ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԼՈՒԿԱՇԻՆ 43/2 ՇԵՆՔԻ ԹԻՎ 77 ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Աջափնյակ վարչական շրջանի Լուկաշին 43/2 շենքի թիվ 77 ոչ բնակելի տարածքը (սեփականության վկայական թիվ 2461524) անհատույց օտարել (նվիրել) Հերմինե Յուրայի Բարսեղյանին:

Աջափնյակ վարչական շրջանի Լուկաշին 43/2 շենքի թիվ 77 ոչ բնակելի տարածքը գտնվում է Լուկաշինի 43/2 շենքի թիվ 18ա բնակարանի ուղղահայաց ստորին գոտում, զբաղեցնում է կիսանկուղային հարթություն, իրենից ներկայացնում է կիսանկուղային տարածք, բնական մասնակի լուսավորությամբ, հարմարեցված է բնակության համար և Հերմինե Առաքելյանի կողմից բարեկարգվել է և օգտագործվում է որպես ննջասենյակ: Նշված տարածքի միակ մուտքը Լուկաշինի 43/2 շենքի 18ա բնակարանն է, այլ ելքեր և մուտքեր չկան, տարածքի ընդհանուր մակերեսը՝ 39.9 քմ է: Տարածքը 2001 թվականից առ այսօր առանց իրավահաստատող փաստաթղթերի զբաղեցնում է դիմումատուն և փաստացի տիրապետում այն և 2 անձով (ինքը և որդին) բնակվում են տվյալ բնակարանում (հիմք՝ շենքը սպասարկող լիազոր կառավարչի 06.10.2022թ. տեղեկանքը և բնակիչների հայտարարությունը): Առկա են տվյալ հասցեի համար կատարված վճարումների անդորրագրերը, Լուկաշին 43/2 շենքի կիսանկուղային տարածքին հասցե տրամադրելու մասին Քաղաքապետի 18.05.2009թ.-ի 4556-Ա որոշումը, ինչպես նաև Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարների պատասխան գրությունները:

Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի հ. 498-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դիմումատուի ընտանիքը ավելի քան 21 տարի առանց իրավահաստատող փաստաթղթերի փաստացի տիրապետում է տվյալ տարածքը և բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի հ.498-Ն որոշման հավելվածի /Ծրագրի/ 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու ավագանու համապատասխան որոշում՝ համաձայն սույն ծրագրի 3-րդ կետի:

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ **ԱՐՄԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

« ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԼՈՒԿԱՇԻՆ 43/2 ՇԵՆՔԻ ԹԻՎ 77 ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Լուկաշին 43/2 շենքի թիվ 77 ոչ բնակելի տարածքը անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

« ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԼՈՒԿԱՇԻՆ 43/2 ՇԵՆՔԻ ԹԻՎ 77 ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող Լուկաշին 43/2 շենքի թիվ 77 ոչ բնակելի տարածքը անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ **ԱՐՄԱՆ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ**